գալով մանկական պարտէզի մասին, Թղթակիցը բացորոշ մերժում է այդպիսի պարտէզի գոյութիւնը հետևեալ խօսքերով: Ծնված լինելով նոյն իսկ Քութայիսում, ես դեռ այդպիսի պարտէզ չեմ տեսել. Ճշմարիտ է, հայոց ուսումնարանի բակում տնկված կան մի քանի քոսոտ ծառեր, բայց միթէ այդ մի քանի քոսոտ ծառերով ուսումնարանի բակը դառնում է պարտէզ: Ի՞նչ կարելի է ասել այսպիսի պարզամտութեան վրա. Քութայիսի պէս քաղաքում ապրել, մի լրագրի Թղթակից լինել և չը հասկանալ թէ ինչ է նշանակում մանկական պարտէզ ասած բանը, այդ աւելի քան ցաւալի է: Ընդունենք թէ պարոն Թղթակիցը առաջին անգամն է լսում այդ խօսքը և իր հասկացածին նման ըմբռնում, իսկ ինչ կարծիք պէտք է ունենալ այն խմբագրութեան վրա, որը այդպիսի Թղթակցութեան տեղ է տալիս և այդպիսի յիմար բացատրութեան մասին ոչ թէ միայն ոչինչ նկատողութիւն չէ անում իր կողմից, այլ ինքն էլ իր կողմից այդ Թղթակցութեան վրա հիմնված մի առաջնորդող յօդուած է գրում և ինքն էլ փոխադարձաբար յարձակվում: Ցաւում ենք, որ այդ պարոնները իրենց համար անծանօթ գործերով են պարապում և իզուր ժամանակորոյս լինում:

Գաւառացի

## ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

Այս օրերս առիթ ունեցանք տեսնել պ. Երմակովի ֆոտոգրաֆիայում Անի քաղաքի աւերակների նրա լուսանկար պատկերների ժողովածուն: Ալբոմը մեծ գիրք ունի և բաղկացած է 46 պատկերներից: Պատկերները շատ աջող են:

—

Քանի մի օր սրանից առաջ այցելեցինք Թիֆլիսից ոչ հեռու գտնվող Մցխէթ գիւղը: Մեր հաւաքած տեղեկութիւններից յայտնվեցաւ որ գիւղը ունի 120 տուն վրացի բնակիչներ և 46 տուն հայ բնակիչներ: Հայերը բոլորն էլ վրացախօս են, ունեն մի եկեղեցի, որ գրեթէ երբէք չեն այցելում և եկեղեցու գաւթում կառուցված դպրոցական մի բաւական յարմար շինութիւն, որ զուրկ է աշակերտներից և որտեղ ամառ ժամանակ բնակվում է շինութեան հիմնող Թիֆլիսեցի տիկին Էֆենդեան: Ուրեմն շինութիւնը պէտք է դպրոց լինէր, բայց դարձել է տիկին Էֆենդեանի համար ամարանոց: Մցխէթի վրացախօս հայերը ուսումը աւելորդ և անպէտք, նոյն իսկ վնասակար բան են համարում: Նրանք ասում են. «Ինչ հարկաւոր է մանուկին ուսում տալ, երբ 10 տարեկան երեխան խոզեր արածացնելով ամիսը 1 րուբլ է աշխատում:» Մցխէթի հայերի կարծիքով առանց ուսման էլ կարելի է ապրել ու հաց աշխատել: Մենք խորհուրդ կը տայինք տիկին Էֆէնդեանին, եթէ նա ցանկանում է որ իր հիմնած դպրոցը ճշմարիտ դպրոց լինի և ոչ թէ դարդակ սենեակներից բաղկացած մի շինութիւն, խորհուրդ կը տայինք, ասում ենք, որ նա գիւղի մի քանի աղքատ մանուկներից իւրաքանչիւրին ամիսը մի մի րուբլ ընծայէր, որպէս զի նրանք գային դպրոցը ուսում առնելու: Այն ժամանակ նրանք ուրախութեամբ խոզեր արածացնելու փոխարէն ուսումնարան կայցելէին: Տիկինը բաւական միջոցներ ունի որպէս զի այդ գործի վրա մի 25 կամ 30 րուբլ գործ դնէր: Եթէ ոչ նրա հիմնած դպրոցը կը մնայ մի մեռած հիմնարկութիւն:

—

«Մշակի» խմբագրութիւնը յայտնում է Թիֆլիսի և այլ քաղաքների հասարակութեանը որ այսուհետև «Մշակի» առաջին երեսի վրա էլ տըպվելու են յայտարարութիւններ: Միայն մեր Թերթի առաջին երեսի վրա տպվող յայտարարութիւնները երեք անգամ աւելի Թանգ կարժենան, քան թէ այն յայտարարութիւնները, որոնք տըպվում են մեր Թերթի վերջին երեսի վրա:

# ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

## ՆԱՄԱԿ ԹԻՒՐՔԻԱՅԻՑ

—

Կ. Պօլիս, 14 օգոստոսի

Ինչ էի միտքս դրած գրել և ինչ պիտի գրեմ: Պատրիարքի հրաժարականի առթիւ պատահած դէպքերը, հետևութիւնները, և այլն պիտի գրէի, բայց ամէն ինչ հարկ է մէկ կողմ դնել: Այս առտու, Աստուածածնի կիրակի, նոր լուր կը տարածուի: Ներսէս սրբազան վերստին մեր պատրիարքն է. այս անգամ ես Պատրիատէի չահանէ, այսինքն նորոն Կայսերական հրամանաւ: Այսօր վար չիջանք որ կարենայինք ստոյգը կամ մանրամասնութիւնքը իմանալ: Ահա ինչ որ կը պատմուի: Երէկ իրիկուն, որ է շաբաթ, Սուլթանի կողմէն երկու սենեկապետներն Խասգիւղ սրբազանին տունը կերթան և կը յայտարարեն թէ Սուլթանը չընդունիր Ներսէս սրբազանի հրաժարականը և թէ Սուլթանը կը յայտնէ որ միայն Ներսէս պատրիարքը կը ճանաչէ Հայոց պատրիարք:—Ներսէս սրբազան կը պատասխանէ որ ինքն ըլլալով շատ վատառողջ չէ կարող պատրիարք մնալ և միանգամայն ժողովուրդը իրմէն շատ բան կը պահանջէ, իսկ իր գրած Թագրիրներն առ Դուռը անգործադրելի կը մնան: Սուլթանի սենեկապետներն կը պնդեն: Կայսերական հրամանը ետ չը դառնար կըսեն և կը յաւելուն որ յատուկ Մասնաժողով մը պիտի կազմուի քննելու համար պատրիարքի հրաժարման պատճառներն և Սուլթանը պիտի պատժէ զանոնք որ խռովութիւններ կը յարուցանեն: Սենեկապետներու այս Թախանձանաց վրայ Ներսէս սրբազան կելլէ Խասգիւղէն կերթայ Գումքափու պատրիարքարան, և կըլլայ վերստին պատրիարք, ու այս առտու ալ փառաւոր կերպով պատարագ կընէ մայր-եկեղեցին:—Ուրիշ կողմէն ալ կը պատմուի թէ պատրիարքը արքունի պալատը կանչուեր է, Սուլթանին հետ տեսնուեր ու այնպէս ետ առած է հրաժարականը:—Այսօր կարող չեղայ ճշգրտել թէ ո՞րն է ստոյգը, բայց որն ալ ըլլայ, հոգ չէ, իրողութիւնը չը փոխուիր:

Այս մէկ շաբաթուան մէջ եղածները, խօսուածները, գրուածները շատ ուշադրութեան արժանի են: Հայ մամուլին հետ միասին այս խնդրովը զբաղեցաւ նաև տեղւոյս Թիւրք և եւրոպական մամուլը, ամէնքն իրենց զանազան տեսակէտներով: Թիւրք Թերթերը կեղծ դիմակով կը գրեն միշտ մեզ վնասակար կերպով: Սակայն այս ամենուն վրայ գրելու այսօր կարող չեմ, զի բաւական անհանգիստ եմ, ուստի կը ձգեմ յաջորդ շաբթուն: Միայն մի քանի բառ գրեմ: Անցեալ նամակով գրած էինք թէ պատրիարքը ըսած է իր հրաժարականին մէջ ուղղեալ առ Սուլթանն թէ՝ չեմ կարող կառավարել ազգս և ժողովը: Այս լուրը Թէպէտ պատրիարքարանէն տարածուած էր, բայց վերջը սխալ ելաւ: Պատրիարքը պարզ հրաժարական տուած է, այսինքն իր առողջութիւնը միայն պատրուակ բռնած է:—Ազգ. ժողովի կողմէն Մայր-դիւանի երկու անդամները գացին պատրիարքի որ հրաժարականը ետ առնէ, բայց անոնց ըսած է որ իր հրաժարականը անդառնալի է: Ուրիշ ուշադրութեան արժանի կէտ մը ես: Մանկունի եպիսկոպոսի անունն ալ լսուեցաւ: Մենք գրած էինք ձեզ մի քանի ամիսներ առաջ որ երեսփոխաններու մէջ ոմանք սկսած են ապագայ պատրիարքցու ընել Մանկունի եպիսկոպոսը:—Երեսփոխաններէն ոմանք անձամբ ըսած էին մեզ զայս ան ատեն: Երէկ աստեղի լրագիրներէն մին կը հաղորդէ թէ՝ երեսփոխաններէն ոմանք միացեր են որպէս զի Մանկունի եպիսկոպոսը ընտրեն պատրիարքական տեղապահ: Թէպէտև լրագիրը ետևէն կաւելցնէ թէ «չենք կարծեր որ յաջողին» բայց և այնպէս հրապարակի վրայ հանել սկսել Մանկունի եպիսկոպոսի անունը արժանի է բաւական ուշադրութեան: Ի՞նչ ժամանակներու մէջ կապրինք:

Վերջի լուրերուն համեմատ կըսուի թէ՝ 8 անձինք որոց մէջ են Վահան վարդապետ, պարոնայք Փափազեան, Սուրէնեան, «Փունջ»-ի խմբագիրն աքսոր պիտի խրկուին, կայսերական հրամանով: Կը կարծենք թէ այս լուրը գուցէ կը տարածեն երկիւղ ազդելու համար պատրիարքի հակառակորդաց:

Հայկակ

## ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

—Կոմս Շամբորի կեանքի վերջին րօպէների մասին Վիէննայի լրագիրներին հաղորդում են հետևեալը. «Կոմս Շամբոր վախճանվեցաւ օգոստոսի 12-ին, առաւօտեան 7 ժամ 25 րօպէին: Դեռ նախընթաց օրը կոմսը հոգևարքի մէջ ընկաւ, որը երբեմն Թուլանում էր, երբեմն էլ զօրեղանում էր. բայց առաւօտեան չորս ժամին մահուան այնպիսի որոշ նշաններ երևեցան, որ ստիպվեցան զարթեցնել կոմսի բարեկամներին և ազգականներին, որոնք Ֆրօսդօրֆ էին եկել: Հոգևարքը խիստ տանջող էր. վերջապէս, մեռնողը, բոլորովին Թուլացած, ընկաւ բարձերի վրա: Բայց նա դեռ ևս շունչ էր քաշում: Այդպիսի դրութեան մէջ նա մնաց մինչև 7 ժամ 25 րօպ. և, ապա, շնչառութիւնը դադարեց: Կոմսուհի Շամբոր, հանգուցեալի ազգականները, խոստովանահայրը, պաստոր Պօլ և բժշկապետ Մայէր մինչև վերջին րօպէն հիւանդի մօտ մնացին: Խոստովանահայրը մօտեցաւ կոմսին, բռնեց նրա ձեռքից և բարձր ձայնով բացականչեց. «Montez au ciel, fils de St.-Louis» (Համբարձիր դէպի երկինք, սուրբ Լուդովիկոսի որդի:) Բժշկապետ Մայէր ձեռքը դրեց կոմսի սրտին և յուզմունքից դողդոջուն ձայնով, արտասանեց. «Ամէն բան վերջացած է:» Կոմսուհին ուշաթափվեցաւ: Դէլլա-Գրացիա դուքսը, բարոն Բէյնկուր, կոմս Մօնտի և Բլօկա բարձրաձայն լաց եղան, զառամեալ Դուէ դէ-Պավիլիօն չոքեց և արտասուալից աչքերով սկսեց համբուրել նրա ձեռքը: Բարդի կոմսը, որպէս ամենամօտիկ ազգական, ծածկեց հանգուցեալի աչքերը: Շուտով մահից յետոյ, հրաժարականի համար հանգուցեալի սենեակը մտան կոմսի բոլոր բարեկամները: Մատրան մէջ զանգակ ածեցին, ամրոցի աշտարակի վրա ծածանվում էր սև դրօշակ: Իր կեանքի վերջին տարիներում կոմսը այնպէս նիհարացաւ, որ նրա գլուխը կմախքի էր նմանում. երկար սպիտակ մօրուքը ծածկում էր նրա ամբողջ կուրծքը: Կոմսը սովամահ եղաւ, որովհետև նրա ստամոքսը ոչինչ չէր մարսում: Աւելորդ է յիշել այն բանի մասին, թէ որքան մեծ էին

---

ծագում են նորերը կրկնապատիկ Թւով: Գիւղեր, քաղաքներ, գործարաններ, երկաթուղիներ սնկի պէս էին պտկում անապատներում: Նաւթի վաճառահանութիւն զարգանում էր, և տարուց տարի աւելի և աւելի նշանակութիւն էր ստանում: Որքան որ մեծանում էր գործը՝ նոյնքան արդիւնաբերողների շահը միլիոնների էր մօտենում, ինչքան սրանք հարստանում էին՝ նոյնքան աւելի ծարաւտենչ էին լինում հարստութեանը...

Սկզբում արդիւնաբերութեան ամբողջ գործը կատարվում էր այստեղ շատ պարզ կերպով: Նաւթը հորերից ածվում էր տակառներ և ուղարկվում էր մօտամերձ երկաթուղու կայարանը կամ յարմարանիստ գործարաններ և այստեղից նա տարածվում էր կամ ներքին շուկաները, կամ վաճառահանվում էր արտաքոյ սահմանի սպառման համար... Բայց երբ երկաթուղիների վրա սկսում է աճել նաւթի բեռնակրութիւնը, նոյն իսկ ժամանակ նոր միջոց է գործ դրվում այդ մթերքը տեղափոխելու համար իսկ և իսկ նաւթային գաւառումը—մեր խօսքը նաւթանցք խողովակների ահագին ցանցի վրա է (pipe—lines): Այսուհետև նաւթը չաղափեալ հորերից ածվում էր անմիջապէս այդ խողովակները, այստեղով անցնում գնում էր դէպի երկաթուղիների մօտ գտնված աւազանները: Այս աւազաններից ածում են նրան տակառներ ու այսպէս բարձում երկաթուղու կառքերը: Այս ամբողջ գործառնութեան մէջ ամերիկացին նկատում է երկու անյարմար դիպուած. առաջին որ նաւթի նշանաւոր մասը վիթվում էր տակառները լցնելու ժամանակ և երկրորդ՝ նոյն իսկ այդ տակառները նրան արդէն ձանձրացրել էին: Այս նկատմամբ նա սկսում է աւազանների փոխարէն պատրաստել երկաթէ ընդունարաններ՝ կիսատակառների ձևով, որոնց նա անուանում է Tanks և որք գետեղում են 80 մինչև 100 տակառ նաւթ: Այդ միջոցում հետևապէս նա երկրորդ քայլն է անում՝ կառուցանում է նաւթային մասնաւոր կառքերը՝ Tanks—Cars... էլ այսուհետև մի կաթիլ անգամ նաւթից չէ կորչում, տակառները անհետանում են, բեռնաւորելու և զանազան տեսակ վերադիր ծախսերը ցածրանում են կամ չքանում և ընդ սմին՝ բոցավառվելու վտանգը հեռանում: Սրանից յետոյ, երբ նաւթի պահանջը աւելանում է, ըստ այնմ չափոյ, դժուարանում էր հանքատէրերի համար իրանց նաւթը շուկաներ հանելը, որովհետև նրանք մի և նոյն ժամանակ համ գործարանատէրեր էին, համ վաճառականներ, համ խողովակների ցանցի տէրեր, և այս ամենայն օպերացիաների մէկ ձեռքում լինելը դժուարացնում էր գործը և այսպէս՝ մեծաքանակ արդիւնաբերութիւնը զգում էր աշխատանքի բաժանման պահանջը: Այս էլ շուտով ի կատար են հանում. խողովակների ցանցը ու սրանց հետ յարակցեալ կիսատակառները—Tanks և կառքերը—Tanks—Cars դառնում են մասնաւոր վաճառականական ընկերութեան սեփականութիւնը, որի պարապմունքը լինում է միայն նաւթը աղբիւրներից երկաթուղու կայարանները հասցնել: Այդ «Tank»-երը այսուհետև ստանում են նաև մի այլ նշանակութիւն. նաւթի արդիւնաբերողները կարելութիւն են ստանում, ընձեռելով իրանց ապրանքը խողովակատէրերին, նրանց փոխարէն վարրանտներ ստանալ: Այսպէս՝ սև նաւթը առաջին անգամ անցնում է ի շարս այլ մթերքների, որոնց փոխարէն վարրանտ է ստացվում համբարանոցի ընկերութիւնից:

Նաւթային արդիւնաբերութեան մէջ, սկսած այն րոպէից՝ երբ նաւթը ստացվում է հորերից և յետոյ, կերպարանափոխվելով կերոսին, դուրս է գալիս շուկայ մեծագումար վաճառման համար, նկատվում է երեք վաճառականական առանձին գործառնութիւն: Առաջինը՝ սև նաւթը տեղափոխելն է դէպի երկաթուղիների կայարանները. նաւթը անցնում է խողովակներով և ածվում աւազանները (pipcage և tancage): Երկրորդ գործառնութիւնը պատկանում է երկաթուղիներին, որք հասցնում են նաւթը գործարաններին, և վերջապէս գործարանները, որք նաւթից արդիւնաբերում են արդէն սպառման առարկան—կերոսինը: Գործի այդ երեք յատկանիշ ձեռնարկութիւնները վերին աստիճան նպաստաւոր են գտնվում նաւթի առևտրի մենավաճառութեան համար, և ահա թէ ինչպէս: Նաւթը գտնվում է իրօք լայնածաւալ գաւառում, բայց և այնու ամենայնիւ՝ սահմանափակ վայրում: Եւ թէև նաւթի հայթայթելը կատարվում է միանգամայն ազատօրէն և նրա վաճառումն կարող է կատարվել անսահման չափերով, սակայն նրա տեղափոխելու և յստակելու վարձերը յօրինում են այդ մթերքի արժողութեան այն էական մասը, որին մաքի առաջ պիտի ունենայ միշտ համ արդիւնաբերողը, համ մեծագումար վաճառողը: Բեռնակրութեան վարձի ճնշելը և ապրանքի Թանգագնութիւնը վիճակված է ամենայն էժան մթերքներին՝ սրանց շարքում և նաւթին: Ուրեմն նաւթի և կէրօսինի գները որոշողը նա պիտի լինի, ումից կախում ունեն բեռնակրութեան և յստակելու վարձերը: Երկաթուղիքը, ծաւալելով իրանց ցանցը նաւթային գաւառում, գործնականապէս ձեռք պիտի ձգէին մենավաճառական բեռնակրութիւնը և ծառայեցնէին ամբողջ արդիւնաբերութիւնը իրանց շահերին և այդ հետևանքին հասնելու համար բաւական կը լինէր դաշնակցել գործարանատէրերի և նաւթանցքատէրերի հետ: Այս համաձայնութիւնը դժուար չէր ձեռք բերելու, վասն զի ցոյց տուած վերջին երկու ձեռնարկութիւնները սակաւաթիւ էին և շահի ընդհանրութիւնը ակներև էր: Նաւթային գործի այդ համաձայնութեան ձեռներէցութիւնը սակայն դուրս է գալիս ոչ թէ երկաթուղիների կողմից, այլ գործարանատէրերից: Այս վերջինները, չունենալով մեծ հարստութիւններ, ըմբռնում են հէնց գործի սկզբում որ առանց երկաթուղիների քաջագոր աջակցութեանը ոչինչ չեն կարող կատարել և այսու ձեռք են կարկառում երկաթուղիներին համաձայն և հաշտ բաժանել իրանց մէջ գործի օգուտը... Բայց գործարանատէրերը, հէնց որ փոքր ինչ հաստատութիւն են զգում իրանց ոտի տակ, հպատակացնում են երկաթուղիները, ծածանելով միանգամայն մենավաճառական դրօշակը...

Այսպէս և իսկ գործել է Standart-Oil-ընկերութիւնը իր երևելի առաջնորդ՝ Ջօհն Րօկֆելլերի (John D. Rokefeller) բազմաճարպիկ աջակցութիւնով: Նաւթային այդ ինքնիշխանը այժմ 41 կամ 42 տարեկան է: Ներքին քաղաքական պատերազմի վերջերում սա Օհիօ նահանգի մի աննշան քաղաքում հաշուէգրավար էր, յետոյ տեղափոխվում է Կլեվլենդ, որտեղ նա սկսում է ալիւրի առևտուրով պարապել... Այստեղ սա ծանօթանում է մէկ նաւթային գործարանի վարձաւորի հետ: Այս յետին աղքատի անունը Ջօհն Անդրիւս (John Andrews) է լինում: Ջօհն Անդրիւսը մէկ օր հաղորդում է իր անուանակից ծանօթին թէ՝ նոր հնարք է գտել նաւթը յստակելու համար, ըստ որում նաւթից կարելի է աւելի կերոսին ստանալ, քան թէ մինչև այժմ ստացվում էր: Րօկֆէլլերի խելքին նստում է իսկոյն այդ գաղափարը և նա ընկերանում է Անդրիւսի հետ, մէջտեղ դնելով իր ամենայն ունեցած չունեցած հարստութիւնը: Երկու բարեկամները առանց ժամավաճառ լինելու՝ անյապաղ՝ սկսում են գործը: Չէ անցնում մի ինչ որ տասը տարի, որ այդ հեղիկ

